

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԳԻՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ

ՍՏԱՄԲՈՒԼ

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս,

Ամենաքաղցր զգացումներով կարդացինք Ձեր 3 նոյեմբեր 1969 թվակիր գրությունը Մեզի ուղղյալ մեր եկեղեցվո վերջին եպիսկոպոսաց ժողովի (սինոդոս) և մյուռոնի օրհնության առթիվ որոնք տեղի ունեցան Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի մեջ անցյալ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներուն, և որոնք Աստուծո ողորմությամբ բարի արդյունքներ և հոգեկան մխիթարություն պարգևեցին Մեզի, մեր հոգևորականության և մեր հավատացյալ ժողովուրդին:

Շատ ուրախ ենք և գոհ որ Մեր սիրեցյալ եղբայրը՝ ամենապատիվ Շնորհք պատրիարքը հայոց Թուրքիո, իր վերադարձին Ձերդ Սրբության բերած է Մեր սիրո ողջույնը և վկայությունը Մեր խոր հարգանքին Ձեր մեծ անձնավորության հանդեպ, որ այնքան բարձր հոգևոր հեղինակությամբ, կներկայացնեք պատմական օրթոդոքս մեծ եկեղեցին:

Թող Աստված Ձերդ Սրբության պարգևե կենաց երկար տարիներ և զորացնե զՁեզ Ձեր մեծ առաքելության ճանապարհին վրա որպեսզի առավել խորանա սերը և եղբայրությունը՝ մեր եկեղեցիներու և աշխարհի բոլոր քրիստոնյաներու միջև:

Շնորհակալ ենք Ձեր բարի մաղթանքներուն համար:

Հարգալից սիրով, Ձեր եղբայրը ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30 նոյեմբերի 1969 թ.,

Ս. Էջմիածին

*
* *

Նույն առիթով, Հայոց Հայրապետի ստորագրությամբ, քրիստոնեական ջերմ սիրո և եղբայրության անկեղծ զգացմունքներով շնորհակալական գրություններ ուղարկվեցին Մոսկվայի և համայն Ռուսաստանի Ն. Սրբություն Տ. Ալեքսի Պատրիարքին՝ Մոսկվա, համայն Վրաստանի կաթողիկոս-Պատրիարք Ն. Սրբություն Տ. Եփրեմ Բ-ին՝ Թբիլիսի, Քենտրբերիի և համայն Անգլիայի արքեպիսկոպոս դոկտ. Մայքլ Ռեմզիին՝ Լոնդոն, և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Բլեյկին՝ Ժնև: